

Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/22 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/22-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ը ի դեմս Վահրամ Գասպարյան ի, որը գործում է « ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն տնօրեն Աննա Դանիելյանի լիազորված անձ Արևիկ Հովսեփյան ի, որը գործում է « «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ ՀՀ ԿԳՄՍՆ կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների /«100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթ/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախառնախան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ

Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8300000.00 AMD(ուժ միլիոն երեք հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել

ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը ^[5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի

իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագրի կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու

օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11^[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

13¹⁸¹

-

-

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ք.Երևան, Վ.Սարգսյան 3,
Կառավարական տուն 2**

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032472

02698732

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ

ՀՀ, ք. Ստեփանավան, Չարենցի 124

Ինտերբանկ ՓԲԸ

2050022568941001

06957798

/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել չ՛ջ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

17⁶Կիրառվում է, եթե կնքվում

էնախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության ծառայությունների մատուցման պայմանագիր

¹⁷Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱ՛-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱ՛-ն» բառերը հանվում են:

⁸Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չհնախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

⁹Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» չ՛ջ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնին կատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

¹⁰Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

¹¹Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի հրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹²Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի հրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

¹³Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով Նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով Նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	92221100/2	հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է ««100 գաղափար Հայաստանի համար» երիտասարդական նորարարական հեռուստահաղորդաչափի նկարահանում և հեռարձակում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կազմակերպումը: Ծրագրի շրջանակներում կիրականացվի ««100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի անցկացման կարգի* համաձայն կստեղծվի Մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և կձևավորվի Մրցույթի փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան: *Ծրագրի իրականացման չափանիշներ 1. Նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստական աշխատանքներն

իրականացվելու են ծառայության մատուցումը սկսելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում: Ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝ 1.1 Ծրագրի տարբերանշանի մշակումը, որը օգտագործվելու է Ծրագրի շրջանակներում բոլոր տպագրական և գովազդային նյութերի վրա և գովազդային հոլովակի պատրաստումը Տարբերանշանի դիզայն պետք է համաձայնեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հետ: Գովազդային հոլովակը պետք է տևի առնվազն 30 վարկյան, նկարահանված լինի գրաֆիկական և անիմացիոն լուծումներով, 4K ֆորմատով: Հոլովակը կոմերցիոն բնույթ չի կրելու: Հոլովակի բովանդակությունը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: Տարբերանշանի մշակումն և գովազդային հոլովակի պատրաստման տևողությունը 15 օրացուցային օր է: 1.2 Գովազդային արշավի կազմակերպումը Ծրագրի մասին տեղեկատվության լայն տարածումը 1 ամիս տևողությամբ, սակայն ոչ ուշ քան ս.թ. հոկտեմբերի 15-ը: Ծրագրի մասին տեղեկատվական հայտարարությունների և հոլովակի տարածումը հեռուստատեսությամբ, կայքերով, թերթերով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներով հեռուստահյուրերի մասնակցության ապահովում: 1.3 Ֆոտոսեսիայի համար գովազդային պաստառը և Ծրագրի այցեքարտերը Պաստառի չափսերը՝ 2 մ x 3 մ: Այցեքարտեր՝ 150 հատ, չափսը՝ 9 սմ x 3,5 սմ: Այցեքարտերի վրա պետք է նշված լինի այն էլեկտրոնային հասցեն, որտեղից հյուրերը կարող են տեսնել իրենց նկարները: Այցեքարտի ձևանմուշը պետք է

համաձայնեցնել Վարչության հետ: 1.4 Բեմի ձևավորման համար անհրաժեշտ պաստառների պատրաստումը և գունավոր տպագրությունը: Բեմի ձևավորման համար անհրաժեշտ պաստառների դիզայն և տպագրություն համապատասխան տարբերանշանով: Պաստառների դիզայնը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: Կախված տարածքի ընտրությունից պաստառների չափերը ըստ անհրաժեշտության կարող են փոփոխվել: Պաստառների ընդհանուր չափսը 10 քմ: 1.5 Մրցանակ (5 հատ) Մրցանակ տակդիրով՝ պատրաստված ապակուց, բարձրությունը՝ 15-20 սմ, լայնությունը՝ 8-10 սմ, դիզայն և պատրաստում: Մրցանակների դիզայնը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: 1.6 Հավաստագիր (5 հատ) 5 անվանակարգերում հաղթած մասնակիցների համար հավաստագրերի դիզայն և գունավոր տպագրություն (տեքստը և դիզայնը համաձայնեցնել Վարչության հետ), չափսը A5 (թուղթը՝ պատրաստված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի ապրիլի քսանչորսի ծաղիկներով, տեղադրված ապակեպատ փայտե շրջանակի մեջ) 1.7 Շնորհակալագիր (20 հատ) Հանձնաժողովի և Կազմակոմիտեի անդամների համար շնորհակալագրերի դիզայն և գունավոր տպագրություն՝ տեղադրված ապակեպատ փայտե շրջանակի մեջ: Տեքստը և դիզայնը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: Չափսը A4, թուղթը, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Հանձնաժողովի և Կազմակոմիտեի անվանացանկը կտրամադրվի Վարչության կողմից: 1.8 Հրավիրատոմս (150 հատ) երկկողմանի գունավոր տպագրությամբ Չափը 21 սմ x 10 սմ, տպագրված Ծրագրի տարբերանշանով, թուղթը, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Հրավիրատոմսի տեքստը և դիզայնը համաձայնեցնել Վարչության հետ: 2. Հեռուստահաղորդաշարի նկարահանում:

Հեռուստահաղորդաշարի նկարահանման աշխատանքները կմեկնարկեն 2021 թվականի հոկտեմբերի 15-ին և կավարտվի 2021 թվականի նոյեմբերի 30-ին: Հեռուստահաղորդաշարը բաղկացած է լինելու 4 հաղորդումներից, յուրաքանչյուր հաղորդման տևողությունը՝ 10 րոպե: Հեռուստահաղորդումները առանձին-առանձին ներկայացնելու են Մրցույթի ընթացքը ըստ գործողությունների հերթականության, ինչպես նաև հաղթող նախագծերը և դրանց հնարավոր զարգացումները:

Հաղորդաշարի ընթացքում ներկայացվելու է նաև գաղափարների հեղինակների և հեղինակային խմբերի աշխատանքային գործընթացը: Ներկայացվելու է Հանձնաժողովի և Կազմակոմիտեի անդամների սինխրոն նկարահանումներից հատվածներ, որտեղ նրանք կներկայացնեն Մրցույթի վերաբերյալ իրենց կարծիքը: Հեռուստահաղորդաշարի նկարահանման նպատակով ճառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝ 2.1 Սինխրոն նկարահանումներ Կազմակոմիտեի և Հանձնաժողովի անդամների հետ: Նկարահանման օրերը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: 2.2 Նախնական գնահատման փուլը հաղթահարած առավելագույնը 20 գաղափարների հեղինակների նկարահանումն մոնտաժ: Ըստ ոլորտների սինխրոն նկարահանումներ, ինչպես նաև աշխատանքային գործընթացների նկարահանումներ: Նկարահանումների իրականացման ժամկետը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: 2.3 Ընտրված 20 գաղափարների ցուցահանդես-ներկայացման նկարահանումներ և մոնտաժ: Իրականացման ժամկետը պետք է համաձայնեցնել Վարչության հետ:

Յուրաքանչյուր տեսահոլովակի տևողությունը 2 րոպե: Տեսահոլովակը պետք է ներկայացնի գաղափարի հեղինակի մտահղացումն ու ներառի աշխատանքային գործընթացը: 2.4 20

գաղափարների հեղինակների և հեղինակային խմբերի հետ կազմակերպչական աշխատանքների իրականացումը` • 20 գաղափարների հեղինակների աշխատանքները ներկայացնելու ժամանակացույցի հստակեցման հետ կապված աշխատանքները,

- 20 գաղափարների հեղինակներին մրցանակաբաշխությանը հրավիրելու հետ կապված աշխատանքները: 2.5 «100 գաղափար Հայաստանի համար» երիտասարդական նորարարական մրցույթի մրցանակաբաշխության կազմակերպումը և նկարահանումը: Մրցանակաբաշխության անցկացման օրն ու ժամը պետք է համաձայնեցնել Վարչության հետ:

Մրցանակաբաշխության ժամանակ յուրաքանչյուր անվանակարգի ներկայացումներից հետո էկրանին կցուցադրվեն յուրաքանչյուր գաղափարի մասին պատրաստված 2 րոպեանոց տեսահոլովակները, ապա հաղորդավարը կհայտարարի համերգային երկուական համարների կատարման վերաբերյալ, որից հետո կներկայացնի տվյալ անվանակարգի համար հայտ ներկայացրած գաղափարների վերաբերյալ Հանձնաժողովի գնահատականների և Կազմկոմիտեի որոշման մասին:

Հայտարարությունից հետո բեմ կհրավիրվի հաղթող գաղափարի հեղինակը և նրան կհանձնվի խրախուսական մրցանակներ /մրցանակ-հուշանվեր, դրամական խրախուսումներ և հավաստագիրը/: Մրցանակաբաշխության ընթացքում շնորհակալագրեր կհանձնվեն նաև Կազմկոմիտեի և Հանձնաժողովի անդամներին: Մրցանակաբաշխության կազմակերպման համար Ծառայությունն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի` 2.6 150-տեղանոց հարմարավետ տարածք երևանում. Մրցանակաբաշխության կազմակերպման նպատակով անհրաժեշտ է 150-տեղանոց հարմարավետ տարածք` ձևավորված Մրցույթի ոճին

համապատասխան: Տարածքը պետք է ապահովված լինի ծրագրի նախապատրաստական փուլում տպագրված համապատասխան պաստառներով ձևավորված բեմով, ամբիոնով, ձայնային և լուսային համապատասխան տեխնիկայով, մրցանակաբաշխության ներկայացման համար անհրաժեշտ Էկրաններով: 2.7 Հաղորդավար. Հաղորդավարը ներկայացնելու է անվանակարգերն ու գաղափարների հեղինակներին, ինչպես նաև հայտարարելու է երաժշտական համարների կամ կատարումների մասին՝ համաձայն նախապես մշակված սցենարի: Սցենարը պետք է համաձայնեցնել Վարչության հետ: 2.8 Տեսակապի ապահովում սփյուռքից Մրցույթին մասնակից երիտասարդների ցուցահանդես- ներկայացումների համար: 2.9 Համերգային ծրագիր՝ ռոկ և/կամ ջազ խմբերի և համույթների մասնակցությամբ. Համերգը կտևի ընդհանուր 60 րոպե: Յուրաքանչյուր անվանակարգի ներկայացումներից հետո 2-ական կատարում: Ընդհանուր 10 կատարում: 2.10 Լուսային համակարգ մրցանակաբաշխության օրը համերգի կազմակերպման համար. • շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք)- 10 հատ, • շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT (կամ համարժեք) - 6 հատ, • ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ, • թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք)- 1 հատ, • ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ, 2.11 Ձայնային սարքավորումների համակարգ մրցանակաբաշխության օրը համերգի կազմակերպման համար. Ձայնային սարքավորումները պետք է համապատասխանեն ընտրված տարածքում ջազային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին: 2.12 Էկրան՝ միացված համապատասխան համակարգչի և մոնիտորի (3 հատ) Յուրաքանչյուր Էկրանը՝ 40 դյույմ տեղադրված բեմի տարբեր

հատվածներում, որոնք պետք է ապահովեն 20 լավագույն նախագծերի վերաբերյալ տեսահոլովակների ներկայացումը հյուրերին: 2.13 Հաղթած գաղափարների հեղինակներին խրախուսական մրցանակների հանձնում: 5 հաղթած գաղափարների հեղինակներին դրամական խրախուսական մրցանակի հանձնում՝ յուրաքանչյուրին 500000 ՀՀ դրամ: 2.14 150 հյուրերի համար մատուցողներով հյուրասիրության (շամպայն) կազմակերպում ջազային նվագախմբի (ջազբենդ) նվագակցությամբ: 2.15 Գովազդային պաստառի դիմաց հյուրերի համար ֆոտոսեսիայի կազմակերպում և 1 օրվա ընթացքում լուսանկարների տրամադրում Վարչությանը 3.

Հեռուստահաղորդաշարի հեռարձակում:

Հեռուստահաղորդաշարի հեռարձակումը կիրականացվի 2020 թվականի դեկտեմբերի 1-10-ն ընկած ժամանակահատվածում:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի՝ 3.1 Հեռուստահաղորդաշարի եթեր հեռարձակումը (օրերը և ժամերը համաձայնեցնել եԶ վարչության հետ)

Հեռուստահաղորդաշարը եթեր է հեռարձակվելու «պրամ թայմ» հանրապետական սփռմամբ, իսկ կրկնությունը հաջորդ օրը ցերեկային ժամերին: 4. Ծրագրի իրականացման վերաբերյալ

ամփոփ հաշվետվության ներկայացում Հաշվետվությունը պետք է ներկայացվի ծառայությունը հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթի հետ և ներառի Ծրագրի իրականացման ընթացքում կատարված լուսանկարներն ու

հեռուստահաղորդաշարը՝ ներբեռնած էլեկտրոնային կրիչի վրա:

Ծանոթություն. Ծրագրի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման համար միջոցառման մասնակիցներին անհրաժեշտ է ապահովել անհրաժեշտ միջոցներով (բժշկական դիմակ, հականեխիչ (անտիսեպտիկ)

հեղուկներ ձեռքերի ախտահանման համար): Կցված է

[f8d952f7.rar](#)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032472

02698732

Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Զարենցի 124

Ինտերբանկ ՓԲԸ

2050022568941001

06957798

տնօրեն Աննա Դանիելյանի լիազորված անձ Արևիկ Հովսեփյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	Ժամկետը**
դրամ	8300000.00	8300000.00	1	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	01.09.2021թ. սկսած, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև 10.12.2021թ:

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի

հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032472

02698732

Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Զարենցի 124

Ինտերբանկ ՓԲԸ

2050022568941001

06957798

տնօրեն Աննա Դանիելյանի լիազորված անձ Արևիկ Հովսեփյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով ևս խատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով ևս խատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	92221100/2	հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ												83000 00.00	83000 00.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ

Նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032472

02698732

Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Զարենցի 124

Ինտերբանկ ՓԲԸ

2050022568941001

06957798

տնօրեն Աննա Դանիելյանի լիազորված անձ Արևիկ Հովսեփյան

/ստորագրություն/

Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿ-ԸՆԴՈՒՄԱՆ

«__» «__» 20__ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 20__ թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/22-1

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «_____» 20__ թ. դուրս գրված N __ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ակացույցի	փաստացի		
1	հեռուստատեսային արտադրանքի							

հետ կապված ծառայություններ							
-------------------------------	--	--	--	--	--	--	--

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

**ազգանուն, անուն
Կ.Տ.**

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

**ազգանուն, անուն
Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գևորգին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ
Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ
(այսուհետ՝ Կատարող)

միջև 20__թ. _____ -ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/22-1 գևման
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին
հանձնման-ընդունման նպատակով

Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական
օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն